ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «21» դեկտեմբեր 2023 թ. N2608 -Ա

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 34-րդ հոդվածի 1-ին մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, «Հավատարմագրման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թ. հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանած դրույթներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Օբոսյանին սույն հրամանի ստորագրման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2023 թ.
դեկտեմբերի 21-ի N 2608-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

4. Կազմակերպությունը պատասխանատու չէ իր հիմնադրի պարտավորությունների համար: Կազմակերպության հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար:

5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կնքում է պայմանագրեր, ձեռք բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում հանդես գալիս որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ:

7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիքներ, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

9. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ ՀԱՄ ՊՈԱԿ կամ ԱՐՄՆԱԲ.

3) ռուսերեն լրիվ՝ государственная некоммерческая организация «Национальный орган по аккредитации».

4) ռուսերեն կրճատ՝ НОА ГНО կամ АРМНАБ.

5) անգլերեն լրիվ՝ «National Accreditation Body» State Non-Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ NAB SNCO կամ ARMNAB:

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Միհեր Մկրտչյան 5:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Կազմակերպության գործունեության հիմնական առարկան «Հավատարմագրման մասին» օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման իրականացումն է:

12. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

1) համապատասխանության գնահատման մարմնի՝ համապատասխանության գնահատման որոշակի տեսակի ծառայություններ մատուցելու իրավասության պաշտոնապես հավաստելը,

2) Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների և ծառայությունների կատարելագործմանը նպաստելը, համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ սպառողների վստահությունը բարձրացնելը,

3) համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը միջազգային հավատարմագրման համակարգերի ընթացակարգերին (ստանդարտներին) ներդաշնակ ընթացակարգերով ապահովելը՝ բացառելով առևտրում տեխնիկական խոչընդոտները,

4) Հավատարմագրման ազգային մարմնի և իր կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների միջազգային ճանաչման համար պայմաններ ստեղծելը:

13. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) համապատասխանության գնահատման ոլորտի մասնագետների համար հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովների, վերապատրաստման և որակավորման դասընթացների կազմակերպում,

2) հավատարմագրմանը վերաբերող հրատարակություններ,

3) տպագրական ծառայությունների կազմակերպում և իրականացում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Կազմակերպության կառավարումն իրականացնում են կազմակերպության հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Լիազորված մարմին), և գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի:

15. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

16. Լիազորված մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

17. Լիազորված մարմինը՝

1) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում փոփոխությունների կատարումը.

2) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմնի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

3) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ.

4) տնօրենի առաջարկությամբ հաստատում է կազմակերպության եկամուտների ու ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը.

5) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը.

6) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

8) ուսումնասիրում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները և քննարկում դրա գործունեության արդյունքները.

9) իրականացնում է վերահսկողություն կազմակերպությանը ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

10) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքն օտարելու կամ վարձակալության հանձնելու համար.

11) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը.

12) մշակում է հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը.

13) իրականացնում է «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

18. Կազմակերպության ընթացիկ գործունեությունն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Լիազորված մարմինը:

19. Տնօրենի գործուղումն իրականացվում է բացառապես Լիազորված մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո, իսկ արձակուրդը տրամադրվում է Լիազորված մարմնի ղեկավարի հրամանով, նախապես համաձայնություն ստանալուց հետո:

20. Տնօրենն օրենքով, հիմնադրի և Լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ Լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21. Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է Լիազորված մարմնի ղեկավարը:

22. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքից:

23. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

24. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, Լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները, և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

25. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում Լիազորված մարմնի ղեկավարի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

26. Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն:

27. Տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

2) որին օրենքով արգելված է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

3) որը նախընթաց 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

28. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և Լիազորված մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

6) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

9) Լիազորված մարմնի համաձայնությամբ նշանակում է կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) ապահովում է հավատարմագրման գործընթացի և հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների պարբերական գնահատման, ինչպես նաև արտահերթ գնահատման իրականացումը.

11) հաստատում է համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման վկայագրերը և դրանց կից հավելվածները.

12) իր իրավասության սահմաններում կնքում է համագործակցության և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման երկկողմ և բազմակողմ փոխադարձ ճանաչման համաձայնագրեր.

13) ապահովում է օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ու տեխնիկական փորձագետների, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների տված համապատասխանության սերտիֆիկատների, գրանցված համապատասխանության հայտարարագրերի և փորձարկման արձանագրությունների ռեեստրների ձևավորումը և վարումը, նշված ռեեստրներից տեղեկատվության տրամադրումը.

14) համապատասխանության գնահատման ոլորտի մասնագետների համար կազմակերպում է հավատարմագրմանը վերաբերող գիտաժողովներ, վերապատրաստման և որակավորման դասընթացներ, որակավորում է հավատարմագրման փորձագետներին (գնահատողներին) և շնորհում համապատասխան վկայագրեր.

15) տրամադրում է համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման վկայագրեր, ինչպես նաև վերաձևակերպված հավատարմագրման վկայագրեր.

16) տրամադրում է շահագրգիռ կողմերին տեղեկություն հավատարմագրման գործընթացի վերաբերյալ.

17) հավատարմագրման բնագավառում տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը և

մասնակցում է հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին.

18) կազմակերպում է համապատասխանության սերտիֆիկատների, պետական գրանցման վկայականների ձևաթղթերի տպագրությունը, դրանց հաշվառումն և տրամադրումը համապատասխանության գնահատման մարմիններին.

19) ստեղծում է խորհրդատվական տեխնիկական կոմիտեներ և սահմանում դրանց գործունեության կարգը.

20) հրապարակում է ԻՍՕ/ԻԷԿ 17011 միջազգային ստանդարտին ներդաշնակ միջպետական ստանդարտի պահանջներով սահմանված հանրամատչելի տեղեկատվությունը.

21) իրականացնում է «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, իրավական այլ ակտերից, սույն կանոնադրությունից Հայաստանի Հանրապետության, տարածաշրջանային, միջազգային փաստաթղթերից բխող այլ լիազորություններ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից:

30. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

31. Հիմնադիրը կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

32. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

33. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

34. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

35. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

36. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության՝ Լիազորված մարմնի համաձայնությամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

37. Կազմակերպության գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

38. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

40. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն են իրականացնում հիմնադիրը, Լիազորված մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

41. Կազմակերպությունը պարտավոր է հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

42. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

43. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

44. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

45. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

46. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

47. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

48. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: